# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2022 թվականի N 23- Ա**

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ *Շնող համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 24-ի թիվ 3 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը
1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 24 փետրվարի 2022 թվականի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
1.2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հաշվետվությունը Շնող համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի կատարման մասին
1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2018-2022թթ համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված և 2021 թվականին կատարված աշխատանքների մասին
1.4 Հողամասերն աճուրդ- վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու, աճուրդի մեկնարկային գին, մասնակցության վճար և աճուրդի քայլի չափը սահմանելու մասին:
1.5 Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի մատուցած ծառայության արժեքը (1 ՀԱ հողատարածքի համար) սահմանելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2. | ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3. | ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4. | ՌՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| 5. | ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| 6. | ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |
| 7. | ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2022 թվականի N 24- Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ **2021** ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝ *Շնող համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հաշվետվությունը Շնող համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի կատարման մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | [signature] | | |
| 2. | ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | [signature] | | |
| 3. | ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | [signature] | | |
| 4. | ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | [signature] | | |
| 5. | ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | [signature] | | |
| 6. | ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | [signature] | | |
| 7. | ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ [signature, stamp] ԴԱՎԻԹ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու
24 փետրվարի 2022 թվականի թիվ 24 -Ն որոշման

| N | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | % |
|---|---|---|---|---|
| | **ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 585796.5 | 563944.4 | 96.3 |
| 1 | ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ | 11819.41 | 9547.7 | 80.8 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄ. | 24066.3 | 22251.9 | 92.5 |
| 3 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 766.0 | 958.1 | 125.1 |
| 4 | ԸՆԹԱՑԻԿ ՆԵՐՔԻՆ ՊԱՇՏ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ | 112710.0 | 112710 | 100.0 |
| 5 | ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | 51216.0 | 51943.919 | 101.4 |
| 6 | ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ | 4455.0 | 7825.4 | 175.7 |
| 7 | ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒԺԵՐԻՑ | 100.0 | 200.0 | 200.0 |
| 8 | ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐՔԻՆ ՊԱՇՏ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ | 162830.6 | 162742.8 | 99.9 |
| 9 | ԿԱՊԻՏԱԼ ՈՉ ՊԱՇՏ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ | 214833.2 | 192764.6 | 89.7 |
| 10 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ | 3000.0 | 3000.0 | 100.0 |
| | **ԾԱԽՍԵՐ** | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **624562.610** | **555948.71** | 89.0 |
| 1 | ՕՐԵՆՍԴԻՐ և ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ | 62820.1 | 55276.16 | 88.0 |
| 2 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐ. ԾԱՌ. | 59140.0 | 55178.73 | 93.3 |
| 3 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 1150.0 | 1059.86 | 92.2 |
| 4 | ՎԱՌԵԼԻՔ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ | 147540.0 | 147539.96 | 100.0 |
| 5 | ՃԱՆԱՊԱՐՀ | 108000.0 | 61554.6 | 57.0 |
| 6 | ԱՂԲԱՀԱՆՈՒՄ | 10200.0 | 9846.0 | 96.5 |
| 7 | ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ | 1000.0 | 499.0 | 49.9 |
| 8 | ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ | 62095.0 | 60801.8 | 97.9 |
| 9 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | 6945.0 | 6796.8 | 97.9 |
| 10 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆ. ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌ. | 35310.0 | 35310.0 | 100.0 |
| 11 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | 3270.0 | 3270.0 | 100.0 |
| 12 | ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 200.0 | 0.0 | 0.0 |
| 13 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | 2600.0 | 2128.6 | 81.9 |
| 14 | ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐ, ԱԿՈՒՄԲՆԵՐ | 14708.5 | 14422.2 | 98.1 |
| 15 | ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌ> | 50.0 | 0.0 | 0.0 |
| 16 | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 71351.7 | 69961.2 | 98.1 |
| 17 | ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 1000.0 | 940.0 | 94.0 |
| 18 | ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ | 28902.8 | 28680.0 | 99.2 |
| 19 | ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԻՆՔ | 1000.0 | 880.0 | 88.0 |
| 20 | ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐ | 1200.0 | 940.0 | 78.3 |
| 21 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2200.0 | 2200.0 | 100.0 |
| 22 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -800.0 | -1336.2 | 167.0 |
| 23 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | 4679.5 | 0.0 | 0.0 |

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2022 թվականի N 25-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ **2018-2022** ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ **2021** ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 82-րդ հոդվածի 7-րդ կետով՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է:***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ 2018-2022 թվականների համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված և 2021 թվականին կատարված աշխատանքների մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

| | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2. | ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3. | ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4. | ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| 5. | ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| 6. | ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |
| 7. | ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝
24 փետրվարի 2022թվականի
թիվ 26Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2018-2022թթ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

### 1. Գյուղատնտեսության և այգեգործության զարգացում

Աշխատանքների կատարման համար նախատեսվել է ընդհանուր 26 000,0 մլն ՀՀ դրամ

«Թեղուտ» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ կատարվել են պտղատու այգիների հիմնման՝ ծառատունկի աշխատանքներ:

Հիմնվել է 28,178 հա այգի:
Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 63 602 238 ՀՀ դրամ :

ոռոգման ջրագծի կապիտալ վերանորոգում՝ 5 մլն ՀՀ դրամ

Աշխատանքներն իրականացվել են ամբողջությամբ 2019- 2020թթ, 2021 թվականին աշխատանքներ չեն կատարվել

### 2.Անասնապահության զարգացում

Աշխատանքների կատարման համար նախատեսվել է ընդհանուր 8 մլն ՀՀ դրամ

**Սպանդանոցում սառնարանի կառուցում**

**Քանի որ սպանդանոցը չի կառուցվել, հետևաբար չի կառուցվել նաև սառնարան**

### 3.Պատշաճ սանիտարահիգիենիկ միջավայրի ապահովում,

աղբահանության հիմնախնդրի լուծում

Աշխատանքների կատարման համար նախատեսվել է ընդհանուր 7000.0 մլն ՀՀ դրամ

| Սանիտարական մաքրման աշխատանքներ | Աղբահանության կազմակերպում |
|---|---|
| 1. Իրականացվել են գերեզմանատան մաքրման աշխատանքներ: Աշխատանքների ընդհանուր գումարը՝ 720 000 ՀՀ դրամ<br>2. Կեղտաջրերի հեռացման աշխատանքներ: Աշխատանքների ընդհանուր գումարը՝ 500 000 ՀՀ դրամ | 1.Շնող համայնքում պատշաճ կերպով կազմակերպվել է աղբահանությունը՝ 8 160 000 ՀՀ դրամի շրջանակներում<br>2. Աղբավայրի վարձակալության համար տրամադրվել է 816 000 ՀՀ դրամ<br>3. Աղբարկղերի ձեռքբերում՝ 3 հատ՝ 150 000 ՀՀ դրամ արժողությամբ: |

4.Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում

Աշխատանքների կատարման համար նախատեսվել է ընդհանուր 3 մլն ՀՀ դրամ

Շնող և Թեղուտ համայնքների միջև հասանելիության ապահովում,միջհամայնքային ճանապարհների նորոգում ,կոյուղու կառուցում

1. Կատարվել են ներբնակավայրային ճանապրհների հարթեցման աշխատանքներ՝ 1120 000 ՀՀ դրամի շրջանակներում

2. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ հիմնանորոգվել են Շնող համայնքի փողոցները ՝200 100 000 ՀՀ դրամի չափով (աշխատանքներն ընթացքի մեջ են)

6.«Շնողի բժշկական ամբուլատորիա » ՀՈԱԿ-ի շենքի արդի սարքավորումներով վերազինում: Շնող համայնքի «Չալեր» թաղամասի գազաֆիկացում:

Աշխատանքների կատարման համար նախատեսվել է ընդհանուր 18 մլն ՀՀ դրամ

| | | |
|---|---|---|
| «Չալեր » թաղամասի գազաֆիկացումը կատարվել է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում | | Աշխատանքները իրականցվել են 2019 թվականին ամբողջությամբ: Ամբուլատորիան գազաֆիկացված է : |

**8. Բազմաձյուղ համագործակցության ստեղծում և զարգացում**

Աշխատանքների կատարման համար նախատեսվել է ընդհանուր 500 000 ՀՀ դրամ

Համագործակցության դինամիկ զարգացման արդյունքում փոխշահավետ հարաբերությունների ստեղծում

Իրականացվել է

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1 Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝

1.1 ձեռք է բերվել արդիական գյուղտեխնիկա՝ 13450000 ՀՀ դրամ գումարի չափով

1.2 հիմնանորոգվել են Շնող համայնքի փողոցները ՝200 100 000 ՀՀ դրամի չափով

1.3 «ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ փողոցները ջրաֆիկացվել են, կառուցվել է ջրամբար և պոմպակայան՝ 152160000 ՀՀ դրամ գումարի չափով

1.4 Հիմնանորոգվել է ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի Քարկոփ բնակավայրի մանկապարտեզ-դպրոցը ՝43 080 000 ՀՀ դրամի գումարի չոփով

2. «Թեղուտ» ՓԲԸ –ի հովանավորությամբ և համայնքի միջոցներով վերանորոգվել են Շնողի մանկական արվեստի դպրոցի գեղարվեստի բաժնի 2 սենյակները

3. Վերանորոգվել են Շնողի մակույթի տան թանգարանի և շախմատի սենյակները, ձեռք է բերվել գույք 4 912 224 ՀՀ դրամ (գումարը տրամադրել է ՀՀ Լոռու մարզպետարանը)

4.Վերանորոգվել է «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի ընդունելությունների սենյակը ՝620 000 ՀՀ դրամ գումարով

5. Շնող համայնքի Թեղուտ բնակավայրի գերեզմանատանը տեղադրվել են դարպասներ:

6. Կատարվել են Շնողի գերեզմանատան մաքրման աշխատանքներ ՝ 720 000 ՀՀ դրամ գումարի չափով

7. Կատարվել են փողոցային լուսավորության անցկացման աշխատանքներ: LED լուսատուների գնում և լուսասյուների տեղադրման աշխատանքներ՝ 4 720 000 ՀՀ դրամ արժողությամբ

8. Նորակառույց ֆուտբոլի դաշտում անց է կացվել լուսավորություն ՝ 1 681189 ՀՀ դրամ արժողությամբ

9. Պատվաստանյութերը հատուկ պայմաններում պահելու համար «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի համար ձեռք է բերվել գեներատոր՝ 550 000 ՀՀ դրամ արժողությամբ

10. Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ-ին ներկայացրած դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Շնող համայնքում բացվել է մարզասրահ, ձեռք է բերվել մարզական գույք՝ 1 271 550 ՀՀ դրամ, իսկ մարզասենյակի վերանորոգման և սանհանգույցի տեղադրման աշխատանքները իրականացվել են համայնքի միջոցներով՝ 880 000 ՀՀ դրամ արժողությամբ:

11. Կատարվել են կոյուղագծերի և կոյուղու ավազանի մաքրման աշխատանքներ՝ Շնողի բժշկական ամբուլատորիայի վարչական շենքից, մինչև 10-րդ փողոց՝ 500 000 ՀՀ դրամ արժողությամբ:
12. «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի համար ձեռք է բերվել ծառայողական մեքենա՝ 2 360 000
13. Թեղուտ բնակավայրում տեղադրվել է հուշաքար՝ նվիրված Եղեռնի զոհերի հիշատակին՝ 65000 ՀՀ դրամ արժողությամբ
14. Քարկոփ վարչական տարածքով անցնող երկաթուղուն կից տեղադրվել են տեսանելի ազդանշաններ՝ թվով 12 հատ՝ 490 000 ՀՀ դրամ արժողությամբ:
15 «Թեղուտ» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ կատարվել են պտղատու այգիների հիմնման ՝ծառատունկի աշխատանքներ: Հիմնվել է 28,178 հա այգի:
Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 63 602 238 ՀՀ դրամ
16 . Վերանորոգվել է սար տանող ճանապարհը՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի աջակցությամբ:

Համայնքի ղեկավար՝ ____________ Դավիթ Ղումաշյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, **077 608-120, shnogh.lori@inbox.ru**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2022 թվականի N 26-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ թվականի թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 61, 63, 67-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Շնող համայնքի Շնող բնակավայրերի կադաստրային քարտեզները և Շնող համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Շնող համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարին ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի վարչական սահմանում գտնվող կադաստրային քարտեզի 06-088-0019-0004 ծածկագրի 0,095615 հա հողամասը աճուրդ վաճառքի միջոցով օտարել՝ սահմանելով մեկնարկային գին՝ 370 000ՀՀ դրամ:
2. Թույլատրել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարին ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի վարչական սահմանում գտնվող կադաստրային քարտեզի 06-088-0019-0001 ծածկագրի 0.05431 հա հողամասը աճուրդ վաճառքի միջոցով օտարել՝ սահմանելով մեկնարկային գին՝ 392000 ՀՀ դրամ:
3. Թույլատրել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարին ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի վարչական սահմանում գտնվող կադաստրային քարտեզի 06-088-0750-0001 ծածկագրի 0.1 հա հողամասը աճուրդ վաճառքի միջոցով օտարել՝ սահմանելով մեկնարկային գին՝ 380 000ՀՀ դրամ:
4. Հաստատել աճուրդի մասնակցության վճարը՝ 3000 ՀՀ դրամ, իսկ քայլի չափը՝ մեկնարկային գնի 5% քայլի չափով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2. | ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3. | ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4. | ՌՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| **5.** | ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| **6.** | ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |
| **7.** | ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 փետրվարի 2022 թվականի N 27-Ա**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ (1 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին կետի 19-րդ ենթակետով ՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է***

1. «Շնողի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ -ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրած գյուղտեխնիկաների մատուցած ծառայու թյունների արժեքը (1 ՀԱ հողատարածքի համար ) սահմանել ՝ համաձայն հավելվածի .

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2. | ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3 | ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4 | ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| 5 | ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| 6 | ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |
| 7 | ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
Շնող համայնքի ավագանու՝
24 փետրվարի 2022 թվականի թիվ 27-Ա որոշման

| | Անվանումը | Համայնքի ներսում ծառայության մատուցման արժեքը՝ 1հա հողատարածքի համար/ՀՀ դրամ/ | Համայնքի տարածքից դուրս ծառայության մատուցման արժեքը՝ 1հա հողատարածքի համար/ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Գութանով հիմնաշրջում (խորը վար) | 100 000 | 120 000 |

Շնող համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյան